




ՀԱՅԿ

ՄԱՐ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 166

26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
ՏՈՒՐԻՆ

ՏՕՂԱՑՈՅՑ

Սեպ.	27	†	Կիր.	աձ.	Գ. Զկնի հաշին: Տօն Վարագայ հաշին:
	28		Բշ.	ակ.	Սրբոյն Դաւթի Դունեցւոյն եւ սրբոյ վկայիցն Ղամբեոսի եւ Ղամբեուհւոյ:
	29		Գշ.	բձ.	Սրբոյն Եւսափեոսի եւ կնոջ նորա Թեո- պիստայ եւ երկուց որդւոցն եւ սրբոյ կուսանացն Երմոնեայ եւ Նեֆառիմեայ:
	30		Դշ.	բկ.	Պահոց:
Հոկտ.	1		Եշ.	գձ.	Սրբոյ իշխանացն Հայոց Սահակայ եւ Համազասպայ:
	2		Ուր.	գկ.	Պահոց:
	3		Շք.	դձ.	Սրբոյ Եօթանասուն եւ երկու աշա- կերացն Բրիսոսի:



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Զորրորդ տարի Թ 26 Սեպտեմբեր 1914 Թիւ 166

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները:»

Նամակ Կաթղ. Մէրի օէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թերզեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, քնդ 60780 բռնահամարաւ:

ԴԷՊՐԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԷՄԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՆ ԱՌԹԻԻ

Մեր նախընթաց թիւին մէջ՝ Բերիա
քաղաքէն զրկուած տեղեկագրութիւն
մը հրատարակեցինք, որուն երկրորդ
մասը անշուշտ ընթերցողաց ուշադրու-
թենէն վրիպած չպիտի ըլլայ, ազգային
դպրոցական խնդրոյն վրայ իր պարու-
նակած միտքարական հանգամանքով:
Չենք կրնար ենթադրել կաթողիկէ հայ
մը, որ՝ տեսնելով մանկութեան դաս-

տիարակութեան մէջ իրական եւ կաթո-
ղիկեայ տեսակէտով ճշմարիտ յառաջ-
դիմութիւն մը, սրտանց չուրախանայ եւ
խնդագին մաղթանքներ չընէ: Այնքան
պէտք ունինք բարւոք եւ լաւ իմացուած
դաստիարակութեան, այնքան շահա-
գրգռուած են անով ամբողջ հասարա-
կութիւն, անոր իմացական մասը, մա-
նաւանդ կրթութեան հետ հոգեկան յա-
ռաջդիմութեան եւ համընթաց քաջելը
տեսնել փափաքողները:

Կ'արժէ վայրկեան մը վերլուծել այն
գաղտնիքը որ տրամաբանօրէն անխու-
սափելի ըրաւ Հալէպի դպրոցական յա-
ռաջդիմութիւնը: Հալէպ... եւ Հալէպի
Հայ կաթողիկէա՛յր... Ի՛նչ խեղճութիւն

էր, ազգային տեսակէտով, դեռ չուրջ տաս տասներկու տարիներ առաջ։ Արարախօս էին, և դեռ եւս են՝ առհասարակ, ինչ ինչ գաւառներու վրայ ծանրացած ժամանակին երկաթեայ օրինաց ազդեցութեամբ՝ ազգային լեզուն կորսնցուցած ըլլալով։ Բաց աստի, անոնք այնպէս մը մեկուսացած կղզիացած էին որ մինչեւ իսկ ազգայնական միջավայրէն և գրեթէ համագործակցութենէն անմասն մնացած էին։ Սակայն և այնպէս Հալէպ ունեցած է իր փառաւոր, ամենափառաւոր անցեալը։ հիացման արժանի անվթար կաթողիկէութեան գործերուն պատմական դարերն ունէր Բերիա իր ետեւը, արժանի ամենէն անմեղ պարծանաց։ Բերիա Հայ Կաթողիկէութեան տուած է նշանաւոր եպիսկոպոսներ, քանի մը Կաթողիկոսներ, ի մէջ որոց առաջինը իսկ, երեւելին և երջանկայիշատակն Աբրահամ Պետրոս Ա.։ Բերիա Հայ Կաթողիկէութեան կրօնաւորներ, խոստովանողներ, և մինչեւ իսկ մարտիրոսներ տուած էր. իր հոծ բնակչութիւնը, մտացի և գործունեայ, բարի և փարթամ, առաջնակարգ դիրք մը գրաւած էր յառաջագէտ այլեւայլ կաթողիկէ հասարակութեանց մէջ։

Սակայն, ինչպէս ըսինք, ազգային դաստիարակութիւնը խեղճ էր, լքուած էր, որչափ հնար է, տասներկու տարի առաջ, գրեթէ չկար. օտարներու դպրոցները կը լեցունէին հայ կաթողիկէ մանուկները։

Իսկ հիմա... ի՞նչ տարբերութիւն, ի՞նչ մեծ, ի՞նչ անհամեմատելի տարբերութիւն։ Գեղեցիկ և մեծաշէն դպրոց մը կառուցուած, մանչերու համար. ահա մէջ նախակրթական և միջին ու-

սուցում, այլեւայլ լեզուներ և գիտութիւնք. մեծ ուշադրութիւն կ'ըլլայ նաև հայերէն լեզուի դասաւանդութեան։ Հոն կը յաճախեն չորս հարիւրէ աւելի սաներ. այսինքն ո՛չ միայն հայ կաթողիկէ նոր սերունդը, այլ և օտար և այլածէս հասարակութեանց եւս բազմաթիւ մանուկները, ա՛յն միակ պատճառաւ որ հայ կաթողիկէ վարժարանն ի Հալէպ՝ ամենէն բարեկարգը, բարեզարդը, ամենէն զարգացեալը և նախանձելին, ամենէն առաջնակարգն է։ Մենք այս նշկատմամբ մեր 144 թիւին մէջ հրատարակութիւն մը ըրած էինք, էջ 269։

Ահա զարմանահրաշ տարբերութիւնը։

Այլ դեռ աւելին կայ։

Վերեւ յիշուած տեղեկագրութիւնը կը ծանուցանէ ևս թէ ի նորոյ կանդնուած է հոյակապ դպրոցական շէնք մը նաև աղջկանց համար, որոնց դաստիարակութեան կը հսկեն Կ. Պոլսոյ Ա. Յ. Կուսանաց առաքելահիներ, ի գլուխ ունենալով Առ. Ք. Ելպիս Կապուաչեանը, որ ամենուն ծանօթ է իր լուսամիտ տաղանդով, զոր կը գործածէ թէ՛ իր կրօնաւորական սրբութեան և թէ՛ ազգային մանկտույ լուրջ և կաթողիկէ դաստիարակութեան։ Միեւնոյն մանկավարժական յաջողութիւնը, պիտի ըսէի յաղթանակը ձեռք բերուած է նաև աղջկանց դպրոցին մէջ։

Հալէպի Հայ Կաթողիկէ Հասարակութեան վիճակուած է Հալէպ քաղաքին դաստիարակութեան դափնին կէցցէ՛...

Ո՞վ...

Կեցցէ՛, այո՛ կեցցէ՛ Արհի. Վիճակաւորը, Օգոստինոս Արք. Սայեղեան։

Աստուած աճեցուց, հարկաւ. բայց

նա՝ աշխատեցաւ, նա տնկեց, նա ոռոգեց, նա քրտնեցաւ, և Աստուած ալ, ըստ իւր խոստման, անեցուց, զարգացուց, բարդաւանեց:

Այս՝ համոզուինք թէ մարդ մը միայն, Աստուծոյ օգնականութեամբ, կրնայ ստէպ փրկել քաղաք մը, հասարակութիւն մը, ազգ մը. և այնչափ աւելի, որչափ աւելի խոնարհ է, լռիկ աշխատող է, նախախնամութեան վրայ հաստատ վստահացող:

Եւ անպատճառ պիտի աւելնայ մեր զարմանքը, եթէ մտածենք նաև ընդհանուր բարեկարգութիւնն ու լաւ վարչութիւնը զոր նա ներմուծեց իր վիճակին մէջ, վերցուց ամէն հակառակութիւն, խողաղութիւնն ու սէր տիրեցին հոն՝ հանդերձ մեծարանօք և ակնածութեամբ առ օրինաւոր իշխանութիւն: Հալէպ նախանձելի և օրինակելի թեմ մը դարձաւ:

Անխոնջ աշխատութիւնն ամէն բանի կը յաղթէ, երբ միանայ անկեղծ աստուածսիրութեամբ. ոյր վասն ոչ փոքր մասն ունին այսպիսի բարեջրումի մէջ՝ յարգելի Արք.ին ջերմեռանդ աղօթասիրութիւնն ու հոգւոց փրկութեան նախանձախնդրութիւնը:

Ասոր առաջին պտուղն է մանկութեան սէրը, Աստուծմէ պատուիրուած այդ սէրը: Ի՞նչպէս պիտի չսիրէ հովիւը այն անմեղ տղաքը, երբ տեսնէ թէ իր Տէրն ու Վարդապետը Քրիստոս զանոնք կը սիրէ, զանոնք իրմէն խափանողները կը յանդիմանէ, զանոնք իրեն կը կանչէ, կը գրկէ, կը գգուէ, կ'օրհնէ. երբ տեսնէ թէ նա ո՛չ միայն թոյլ կուտայ որ իր աստուածային յաղթանակաւ երուսաղէմ մտած օրը տղաքը

իրեն ի պատիւ ձիթենոյ ճիւղեր կրեն և տաճարին մէջ հրեշտակաց պէս երամովին երգեն Աստուածորդւոյն յաղթանակը, այլ նաև զանոնք բամբասող բարկացայտ փարիսեցւոց դէմ անոնց պաշտպան կը կանգնի, և աստուածախօս պատգամն յիշեցնելով, կը պապանձեցնէ անոնց թունալից լեղուագարութիւնը. «Ձե՛ք կարդացած դուք՝ թէ Աստուած տրայոց ու կաթնկեր մանուկներու քերական լրացուց օրհնութիւնը»:

Եւ ահա՛ աս պատճառաւ է որ Ս. Եկեղեցին միշտ իր մասնաւոր գուրգուրանաց առարկայ ըրած է մանուկներու հոգեկան, մտաւորական ու բարոյական դաստիարակութիւնը: Ինչպէս որ Քահանայապետական իմաստութիւնը տրամադրեց որ անոնք, հազիւ բանականութեան սեմը ոտք կոխած, կազդուրուին հրեշտակաց Հացովը, նոյնպէս միշտ պատուիրեց որ անոնց զարթնող մաքին արշալոյսը՝ կրքերու խաւարման ամպերով չմթագնի և մոլորական և անբարոյ վարդապետութիւններով անոնց սրտերուն նոր ծաղիկը չխամբի: Աստուծոյ երկիւղը և ուղիղ մտաց իմաստութիւնը առաջնորդեն անոնց. «Եկէ՛ք, ո՛վ իմ զաւակներս, մտիկ ըրէ՛ք ինծի, եւ Աստուծոյ երկիւղը տրովեցնեմ ձեզ»: Ապագան անոր է, որ կը կրթէ մանուկները. նոր սերունդն է որ պիտի տիրէ, եթէ բարի եթէ չար. նոր տունկն է որ ծառ պիտի ըլլայ ու պիտի պտղաբերէ, եթէ թուզ եթէ տատասկ:

Ահա ասոր համար է որ հոգւով չափ կ'ոգորին բարի ու չար սկզբունքը, հաւատքն ու անհաւատութիւնը, թէ ո՛ւմ պիտի վիճակի մանկութիւնը. և, աւա՛ղ, ստէպ «Որդիք աշխատի՛ս աշխո-

րիկ խնասկանացոյն եւն քան զորդիս շուտոյ: Փարմաստեութիւնը՝ այլեւայլ ըզգեստներու տակ, կ'ուզէ անմրցելիօրէն ունենալ մանկութիւնը. մերթ կ'ըլլայ պետական օրէնք, մերթ ոսկեզօծ ազատականութիւն, մերթ անտարբերութիւն կամ անխորականութիւն կամ ազգայնամուտութիւն. միշտ մոլորութիւն կաթնցնելով մատղաշ մտքերու. է՛ զի անզուսպ կը բռնանան ինչ որ փաղաքշող շողմաւորները գործիք կ'առնու. երբեմն ծաղկեալ քերդողութեամբ, երբեմն չոր և խիստ իմաստասիրութեամբ բազում ա՛յն է զի գեղապաճոյճ գրքերով, և յաճախագոյն ևս օրաթերթերով, միշտ սակայն իժ և քարք ընդ մարդօք և ընդ ծաղկօք, ի մահ պիտի խայթեն անպատասպար մանկիկները: Երբեմն, որ ամենաչար իսկ է, նոյն իսկ անզգոյշ կրօնականներն անգամ անդիտակից գործիքներ կ'ըլլան, գովելով ա՛յս ինչ հեղինակը որ անհաւատ է, դրուատելով ա՛յն ինչ թերթը որ անկրօն է, և, աւա՛ղ աղէտիցս, նոյն իսկ կարդալով, կարդացնելով և մեկնաբանելով: Ո՛հ, փոխ մի խնոր զամենայն զանգուածն խնորէ:

Արդ պէ՛տք է նոր սերունդ հանել, հաւատացեալ, համոզուած, կրօնքը գործադրող և նոյն իսկ պաշտպանող. որ, ըստ Առաքելոյն, ամէն հարցնողին կարենայ պատասխան տալ իր հաւատքին վրայ: Պէ՛տք է Քրիստոսի նոր մարտիկներ կազմել յորդորել, զինել և առիւծացնել ընդդէմ անօրէն ոտիւն և ոտիւաց... Նոր սերունդ, որ չըլլայ քիչ մը բանաստեղծ, քիչ մը հաշուադէտ, քիչ մը լեզուագէտ, քիչ մը քաղաքագէտ, և ոչ մին կատարեալ և շատ ազ-

գամու, շատ անխորական, շատ ապշտամբ ոգւով, շատ ազատամիտ, շատ...

«Ո՞վ որ ինծի հաւատացող այս փոքրիկներէն մէկը զայրակողեցնէ, աւելի աղէկ էր որ ծովուն խորերը ընկողներ այնպիսին» ըսաւ Փրկիչն Յիսուս:

Պէտք է ուրեմն նոր սերունդ հանցնել, ինչպէս որ պէտք է:

Որո՞ւն պարտքն է այդ, որո՞ւ պաշտօնը:

Տեսնենք յառաջիկայիւ:

ՀԻՆ ՎԱՍԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՑ ՊԷՄ

(1827 — 1830)

Հոս հայերէն թնագիրը հետեւեալ տղերք կը դնե, որոնք լիան քրիստոնէի մեղ:

Եւ տու միջոցս ֆրէնկիտտանէ Ճրտնկֆօրթ կաղէթա եկաւ մամուաւոր կրնամ ըսել տու բանին վրայ էր, որ էր այսպէս:

«Պու տէֆա զատրըմ ուղէ աշիքեար էթմէյէ քաթօլիքէրին իւզէրինէ օլուն դազէպին առը սէպէպինի քի վաքթին թէվարիսինտէն իսպաթ օլունապիլիք:

«Մուախխարէն օլուն սէնէլէրին տնվալլէրինտէն շէվքէթլու սուլթան Մահմուտ հազրէթլէրի, բայառնտան չիւպէլլի վէ էմիլիթսիզլիքտէ իտի, չիւնքի ծնլարըն սէպէպի ֆրէնկ կախօս լաթին մէզհէպի իլէն մըթապըք օլմառը սէպէպի իլին. պուռուն իւզէրինտէ էջմիաթինտէ պիլ չօք էրմէնինին Մօքթօֆու օլմալարը, վէ տէվլէթէ տսի օլտուրլարը իսպէրի կէլաիքտէ, Ստամպուլտաքի հերետիկոս էրմէնիլէրի քի էքսէրիսի տէվլէթին ստորաֆլըղընը էտէրէր, պուռլար չօք զէմմուտան պէրույուտու քաթօլիք էր-

մէնիւներն ուսն իմիսարդերնի խային եիւ-
րէք իւնն վէ քրքանճըզ կէօզիւ իւնն նա-
զար էտիւօլար րոր, ծնար տախի վիւքեա-
լէներն վէ ըրճալը քիւրամն սարրաֆըք
խըզմէթլէրնիստէ իտիւեր. հասըլը հերետիկոս-
լար չալըլըլար չէվքէթլինին կէօզիւնէ մի-
լէթլէրնիստէն զուհուր իտէն սախիյի կէօ-
տէրմէմէյէ. զիրա քօրքարլարրը քի պու սէ-
պէպլէ, տէվլէթ իւզէրնիէ քարարըպ էօրֆ
փէյտաճ էթմէսին. վէ տէ իստէտիքլէրնի
քօլայըլըլան իճրա էթսինլէր, ֆաքաթ ֆը-
րսնսըզ էլչիսինին զայպէթլինէ պէքլէրլէր
իտի. նիւին քի քաթօլիքլէրէ տայմա տէվ-
լէթճէ սահիպ օլտուղոսնտան, քօրքարլար
ըսը քի քուրուլան սուզաքլարընա պիր
կիւճիւք վէրմէսին տէյի. վէ քաթօլիքլէրնի
եքըմընա իսթէտիքլէրի կիպի միւրապարը
իւզէրնիէ էսէպիլսինլէր, իլլա պազիլէրնիին
քի փէք համմիլէթլէրնիստէ իտիւեր վէ կէօյա
պուլար պու ուսուլ իլէ եքըպ քէնտիլէրի
նազարտա օլուպ տէվլէթին եանընտա սա-
տաքաթլը կէօրիւնիւպ զիյատէ նուֆուս է-
տինսինլէր. պէօյլէճէ հերետիկոս թաքըմը հէր
պիր կէօնէ օլան ճահալէրնի իճրա էթմէյէ
պաշաալար, վէ սէօյլէյէք չէվքէթլինյէ
քի քաթօլիք րայասը տէվլէթլինիզտէ պիր
թէհիլքէլի միլլէթ տիր, վէ տէրուլէրի մօս-
քօֆ վէ ֆրէնկ օլմաքտան մատէ հէր պար
ֆրէնքլէր իլէ հուքուքտէ տիրլէր տէյէքէք.
«Պու իֆթիրալէրի զօլայ հասըլա կէթիր-
տիլէր. զիրա հերետիկոս թազըմընն սահի-
պի վէ արքալէրի չէվքէթլինին նազարընտա
օլանլար արը, եանի Սիլիստար ազա, զարք-
հանէ ուստաըր Գազազ Արթին, կէրէք նու-
ֆուս իլէն կէրէք հիսապըզ մալի իլէն էթ-
րաֆը տօյուրարաք քաթօլիքլէրի պաթըրմա-
յա չալըլըպ վէ իսթէտիքլէրի կիպի գուլա-
նըյօրլար. վէ ծնուն հարտըմըլարը Գիրգոր
գալֆա չիմտիքի մուալլիմ տօքէրի քըշա-
լարընը եալիմաք հասէպիլլէ, օլ տահի տէ-
րէճէսիզ չէվքէթլինին նազարընտա արը վէ
պուլարըն քուսուր եարտըմըլարը հերետի-
կոս փաթրիյի Կարապետ, թիւքի թապիլէթլի
վէ չէթան ֆիքիրլի տտէմ օլմազլէ փարիսե-
ցիլիք կիզմաւորուղուլան, մէսէպէ կէօյա

չօք քայրէթլիլիք կէօտէրլըր, վէ ծնուն սէ-
լէֆի բաթրիք Պօղոս ծնտան պէթթէր վէ
ծնտան զիատէ մազիւրը քիմէսնէ տիր. վէ
պարութիսանէ ուստաըր հաճի Տատ օղու-
Սիմօն վէ ստարազամ վէ րէյիս էֆ. սարաֆ-
լարը, ազա Պօղոս վէ Բիշմիշ օղու Միքտ-
յէլ. հասըլը ուզաթմայալըմ պիր եիրմի քի-
չի քատար տտհա քի էն նամըլարը ճանիկ
Դիլփիլ օղու, Աչնան օղը վէ Նիվազ օղը
Արթին, պու վէ պու կիպի քիմէսնէլէր տիր
քի տէվլէթին ըրճալը քիպարընը ուպուտի-
յէթ իլէ էտինիպ ճէմիսինին ազընը քա-
բաթտըլար, վէ էջմիսին փաթրիյինին իսմի
կաթիպիկոս տէնմէ իլէն հերետիկոսլար չէվ-
քէթլինի զօլայըլըլան գանարըպ տէտիլէր.
իշտէ Մօքքօֆա քաշըպ սախ օլանլար քաթօ-
լիքլէրնի ճինսինտէն իտիլէր. տէվլէթի պէօյ-
լէ գանարըմալէրնիտէ, օ վազըթ չըքտը օ
ֆէրմանլէր քի պու գոտար ճանլէրի անա-
տօլույա սիւրաիւրտիլէր, վէ պու. զազէպի
ալէսէֆիլէ ճէմիի քաթօլիքլէրէ էթսիլէր քի
քէնտիլէրնիին նէ սէպէպ իլէ պու մատտէյէ
պաշ գօշտուքլարը աչիքեար օլմասն, վէ
պու պապտէ քաթօլիքլէրնի էթտիյի զիյան
քալէմէ կէլմէզ. կէրէք սիւրկիւն մէսարիֆի
կէրէք էշտալէրնի հօք բահասընա սաթըրմա-
սը վէ կէրէք էվլէրնիին սաթըրմասը, եիւզ-
տէ 80 վէ 90 զարար էթտիլէր ճէմիսի տէ,
հասըլը պու իուսուստա հասըլա կէթիրտիք-
լէրի հէր պիր ամէլ ֆիրատէ ֆիրատէ մա-
լիւմ տիր. չիմտիքի հալտէ պու միլլէթի եք-
քըլմը միլլէթլէրնի սըրաընա քօմալը. քու-
րանը չէրիֆ պու մէզնէպ միւզաքէրէսինի
եասաք էթմէսի իչլին ֆէրմանլարտա քաթօ-
լիք իսմի եազըլմաւը, ֆաքաթ եազըլան էն-
քարէյի ֆէյլի վէ մէսէպի վէ փաթրիյէ պէ-
յաթ իտիպ թապի օլմալը տըր տէյի եազըլ-
տը:

«Անճաք սիզլէրէ պիր թաղըմ չէյ տահա
պէյան էտէճէլիմ չօք քաթօլիք քըզլարը
տիւնեալըքտան ֆարիզ, եախօտ մարապէտ
օլարաք քէնտի ֆաթիլիալարընն արաւնտա,
ուսուլ վէ չնորհըլու վէ իպրէթ ալընաճաք
պիր էօմիւր կէչիրիլէր իտի, պուլարը քա-
թօլիք բաքալարընն ըսպուլարը արը տէ-

յերէք տէվլէթի քանտրըպ, էվլէրինի կէճէ վապթընտա պատրըպ բաթրիքհանէ մահ- պուսուռնա թաշըտըլար. հասթէ օլանլէրի համալ սըրթըլան, էքսէրիսինի տէ չօք թիւր- լիւ ընդալէթլէր էտիպ. էպէլէրտէն եօքլա- տըլար հասըլք քարըլարը վէ քըզլարը զէն- ճիրլէր պօյուռնլարնտա բաթրիքհանէ մահ- պուսուռնա սիւրտիւլէր վէ օնտան անատօլու թարաֆընա սիւրտիւլէր. սանիէն ըռւմ բաթ- րլինին հալէպլի քաթօլիքլէրէ նէզարէթի օլմասըլան օնա տախի էմր օլունտու քի անլէրէ պիւտրսին, էկէր ըռւմ օլմազլար սա օնլար տախի գաթօլիքլէրէ օլան կազէպ կիպի պու թարզ կազէպլէրէ հազըր օլուն- լար. էլլիլէրին պու մէզհէպ խուսուսուռնտա տէվլէթ իլէ միւզաքէրէ էլլէտիքլէրինտէն պէրու. քաթօլիքլին քալքմասը նիզամը միւլքին նիզամը սըր տէյերէք, իտիսաթ է- տէնէ ինալէ օլունտու քի ասըլ էտէնլէր պէ- յան օլունմասըն տէյի, շիմտի էմիւրէր էն- տէրուռնտէն ինթիսապէ կիտիյօր, պու պիր քաշ ալլաք վէ մընաֆըք էրմէնիլէրին ար- քալէրէ, սիլիտար աղա օնուն նուֆուսու իլէ չէֆէթլիլի քօլալըղըլան ալտաթմալա- ըննա էրմէլէրի իլուն պուռնու տախի տէտի- լէր մէմալիքի մահրուսէտէ օլան պիր քաշ միլիօն քաթօլիլի ճիւղլիլէթ մաքուլէսի տէյի կէօստէրտիլէր վէ հէր թարաֆա ֆէրմանլար տաղըլար. մաալլէրինտէն պէյան օլունտու քի պուռնտան պէօլլէ մէմալըքտէ ըռւմ վէ էրմէնի բաթրիքլէրինտէն վէ խախամ պաշըն- տան զայրի մէսհէպ օգուռնուշլարը գապուլ օլունմասըն:

Ճիւսաճիւլ օլունտու քի քաբու հէր պիր խուսուսա նիզամ վէրմէնի իլէ պու խու- սուստա նիլլին քաթօլիք ըյալէլէրինէ նիլլին պիր բաթրիք նասպ ըյալմէյօր, նասըլ քի տիւրզիւ տաղընտա էմալի վար տըր. վէ պու մէմալըքտէ օլան ճէմի քաթօլիքլէր չօգ- տան պէրու արզիւսիւնտէ տիւրլէր, վէ պու միլլէթ հէր պիր մահալտէ վար, եանի կէ- ըք ասիթանէտէ, կէրէք Ալի Օսման տէվ- լէթին հէր պիր մահալլինտէ, անատօլուտա, արապիստանտա, մըսըրիստանտա, կուրճիս- տանտա, էրմէնիստանտա, ատալարտա վէ

սայիր քուսուր եէրլէրտէ քի օնլար տա թա- սիհ օլունա պիլիւր, վէ հերետիկոս բաթրիք- լէրին հէր պար քէնտիլէրինէ էթտիպլիլի քէօթիւլիւ քլէրտէն խէլաա օլունտար տէյու, պիր քաթօլիք բաթրիլի նասպ օլունտուտա, քաբու տախի պիր մէնֆաաթլը իրատ էտի- նիր հէր պիր ճիւլէթտէն, խուսուսա տալիմա տէվլէթի ալլիլէնին սատըք ըյալէսի քաթօ- լիքլէր տիր. նիլլէ քի ըռւմ ֆիթրէթինտէ ըսպաթ օլունտու սատաքաթլէրի, կէօրիւ- նիւր քի չէֆէթլիլի էօրֆիւլ հարէքէթինտէն խտէյօր պէյան էթմէյէ քի մէմալիքլինտէ եալընըլ քէնտի տիր հիւքիւմ սահապը.»

Աս եկած կազէթայիս վրայ հայք շատ չփոթեցան զէրէ ամէն մարդուն անունը և ըրածը դուրս ելաւ:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳՆԻՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԹԵՆ

Գ ի Ր Ս. — Գ ի. Ի. Ի. — Մ'առնաւ մեծաւորեան վրայ:

(Շար.)

Ի՛րջափ երջանիկ եւ իմաստուն եւ այն՝ որ կը ջա- նայ հիսա ա՛նպիս կեանք վարել, ինչպիս կը բաղձայ զօնուիլ մահուան ասեմ:

Իրովհեօեւ երջանիկ մահուանք մեռնելու մեծ վըս- տահուրիւն պիտի օայ՝ կատարեալ արհամարհութիւն աշխարհի, նուանդագին փափաք զարգանալու առախ- նութեանց մէջ, սեր կարգապահութեան, փոյր ապաշ- իարութեան, հնազանդելու պատասխանութիւն, անձ- նութեան եւ Գրիստոսի սիրոյն համար որ եւ իցի նեղութեան համբարել:

Նաօ բարի գործեր կրնաս ընել, միևնոյն առողջ ես. բայց երբ հիւանդանաս, չգիտես ի՛նչ պիտի կարե- նաս ըսել:

Իրջեր հիւանդութեան ժամանակ կ'ուղղուի՞ն, այս- պիս եւ անոնք որ շաօ կը բախաւորն ուրազանացու- րեամբ, ի՛նչ տնգամ սուրբ կ'ըլլան:

ՍՈՒՐԻ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ

Նախահայր արեւմեան վանականներու

Այս մեծ Սուրբ՝ Տիեզերորդ Դարուն վերջերը աշխարհը ծածկող աղանդաւորն մէջ ծագեցաւ իբրեւ

երկնային լոյս մը։ Արեւելքի մէջ վանական հաստատութեանց փայլը մարած անցած էր ընդ միշտ։ Կոստանդնուպոլսոյ ինքնակալները այլևս միմիայն Տիեզերական Ժողովներուն և Քահանայապետին դէմ յարձակումներ գործելով կը զբաղէին, մինչ անգին բարբաւրոսները անոնց երկրները կ'ստպատակէին. և քանի մը եւրոպացիներ որոնց պարտքն էր Եկեղեցին պաշտպանել, անօրինակ հաւատադժուածեամբ կ'օգնէին եկեղեցամարտ կոչուելու։ Արեւմուտքի մէջ Հռոմէական կայսրութեան վերջին Թագաւորները յարգաւորներու հասանքին տակ կ'անհետանային թէոքսիկ, արեւելեան Գլխացի պետը, քիչ ատենէն Իտալիոյ մէջ կարգ կանոն վերահաստատելու պիտի երթար։ Բայց միեւնոյն ատեն արիւնքութիւնը կ'իշխէր արդէն հարաւային Ֆրանսայի, Սպանիայի և Ափրիկէի մէջ։ Պետք էր երկրորդ անգամ վերագրաւել աշխարհը¹։ Այս փառաւոր աշխարհակալութեան համար Աստուծոյ կազմած բանական գլուխը եղաւ Սուրբ Բենեդիկտոս։ Ծնաւ 480ին, Սարինացեաց երկրէն, որ հիմա Ումբրիոյ կոմ Սպոլետի գաւառութիւն կը կոչուի, Նորկիս քաղքին մէջ։ Հայրը որ Եւստրակիոս կը կոչուէր, եւ մայրը որ Արոնդանա կ'ըսուէր, երկուքն ալ ազնուական տոհմէն էին։ Սուրբ Գրիգոր Քահանայապետը որ անոր կենդանութեան առաջին հեղինակն է, կ'ըսէ թէ Բենեդիկտոս (=օրհնալ) անունը անոր արուեստաւ, որպէս զի խորհրդաբար ցոյց տրուին այն երկնային օրհնութիւնները որոնցմով պիտի լեցուէր։

Մանկութենէ՝ առաքինութեան համար մեծ միտումներ յայտնեց։ Եւ այնպիսի հասակի մը մէջ, ուր թեթեւութիւնը կարծես բնական բան մըն է, Բենեդիկտոս արդէն մեծ խելահասութիւն ցոյց կու տար գործելու ատեն, ամէն երկուուր իրերը կ'արհամարհէր և միմիայն երկնայիններուն արժէք կու տար։ Երբ եթէր ստուռան եղաւ, ուստով՝ սորվելու համար Հռոմ զրկուեցաւ։ Հին Բենեդիկտոս 7 տարի կեցաւ և ինչն միջոցին շատ մեծ յառաջանութիւն ըրաւ, այնպէս որ ամէնքը համոզուած էին որ եթէ ուսումը շարունակէ, իր ժամանակին ամենէն իմաստուն և յաջողակ մարդիկներէն մին պիտի ըլլայ։ Բայց Բենեդիկտոս վախճալով որ ըլլայ թէ Հռոմը լեցնող զեղծաբարոյ երիտասարդութեան չար օրինակը յուր ազդեցութիւն գործէ իր սրտին վրայ, որոշեց, տասնուչորս տարուան եղած ատեն, զաղտուկ փախչել այն տեղէն։ Լաւագոյն կը համարէր թերութեան և առաքինի ըլլալ քան գիտնական դառնալ և ախաւոր ըլլալ։

Թողուց լեցնէ Հռոմը և իր բոլոր ավագանիներն ու բարեկամները, և, իմաստուն յիմարութեամբ ու հմտալից ազիտութեամբ, ինչպէս կ'ըսէ Սուրբ Գրիգոր, գնաց ընդգրկելու տնայապաներուն մէջ, աշ-

խարհի յարաբերութիւններէն հեռու, այնպիսի կեանք մը որով կարենար Աստուծոյ ծառայել աւելի եւս։ Դով և նուազ վտանգով, իր դայեակը, Կիւրեղա, որ զինքը կաթողին կը սիրէր, քիչ մը ատեն անոր հետ կեցաւ, բայց Բենեդիկտոս կրցաւ անկէ ալ խոյս տալ։ Ձեն կասեցնէր զինքը ոչ հեղեղատներու խորութիւնները, ո'չ լեռներու բարձրութիւնները։ Աւերջապէս կը հասնի Սուրբակի ժայռերը, Հռոմէն քառասուն մղոն անդին, ուր սրբակեաց միանձնէր կային։ Սրբուհի Հիլդէգարդա իր յայտնութեանց մէջ կը հաստատէ թէ Բենեդիկտոս հին առաջնորդուեցաւ երկու հեղատակներու կողմէ, որոնք արդէն զինքը Հռոմէն հանած էին։ Երբ իր փափաքած տեղը գտնելու համար մագլցելով լեռ կ'ելլէր, Աստուծոյ թողաւորութեամբ Ռոմանոս անունով ճգնաւոր մը զայն ահաւա, և հիանալով անոր եռանդին վրայ յայտնեց որ յանձն կ'աւելու կարելին ընել անոր աքանչելի նպատակին իրաւորման համար։ Բենեդիկտոս շնորհակալութեամբ ընդունեցաւ ճգնաւորին առաջարկը։ Այն ատեն, Ռոմանոս նախ անոր կրօնաւորական զգեստ մը տուաւ։ Եետոյ զայն տարաւ բոլորովին թաքուն և գրեթէ անմարտնայի, խոր անձաւ մը, զոր բնութիւնը կրօնական բացած էր ժողովի մը խառնչին մէջ, և որ այժմ Սուրբ-Անձաւ կը կոչուի։

Ահա այս տեղ, այս մեծ Սուրբը, քաղաք հազած եւ ամէն մարդոցմէ բաժնուած, սկսաւ այն սոսկալի ճգնութիւնը, որուն մտածումը միայն կրնայ զարմացնել ամենէն յանգուկները։ Ռոմանոս այն տեղ գտնելից կերակրեց ամբողջ երեք տարի, երբեմն երբեմն կողովով հին իջեցնելով կտոր մը հաց, որ Սուրբին միակ անուշիկն էր։ Այս բանիս համար լուսութիւնը չէր խգեր, այլ զայն կը կանչէր կողովին շուռնին կապուած զանգակով մը։ Մարդկութեան թշնամին չկրնար զհանգուկէր ոչ մէկուն խստակեցութեան և ոչ միւսին ընկերսիրութեան, օր մը քաղի հարուածով մը կտորեց այն զանգակը։ Աւերջապէս հաճեցաւ Աստուած աշխարհի յայտնել իր ծառային սրբութիւնը անհամար մարդոց հոգւոյն փրկութեան համար։

(Շարունակելի)

ԿԻՒՐԻՆԷՆ

Կիւրին, 23 Օգոստ. 1914

Գեղ. Դերայ. Տէր

Խնդրեմ որ հաշիք Օննիկ Կէթիէրեանի ստորագրութեամբ ներգրկեալ յօդուածը տպել Կաթողիկէ Արձագանգի մէջ։

¹ Les moines d'Occident, par le Comte de Montalembert, t. II, p. 6.

Մեր Յոթեղեանի վրայ տեղեկութիւն տուող
Պ. Թորոս Թէրճանեան զինուոր ըլլալով այս տեղամ
այս պարոնը ստորագրեց:

Կանխիկ շնորհակալութեամբ
Գեղ. Գեղ. Տեառնդ
Խ. Մ.
ԳՐԻԳՈՐ Վ. ՓԷՂԻՎԱՆԵԱՆ
Ժողովրդագետ

ԿՍՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԱՐԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԻ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ

Արհի. Վիճակաւոր Լեւոն Արքեպիսկոպոս-
սի առաջին գործը եղաւ որոշել Յոթեղեանի
տեղեկութեան միջոցը. մի ամիս Յուլիոս 8/19
Վարդապետի Կիրակիէն սկսեալ մինչեւ Վե-
րափոխման մեռելոցի Բշ. 17 Օգոստ.:

Նորին Արհիպատուութեան նախագա-
հութեամբ մասնաժողովներ կազմուեցան կրօ-
նական արարողութիւններու և այլ հանդի-
սութեանց բարեօք կարգապահութեան համար:
Ի լրումն փափաքանաց առ հասարակ ամբողջ
ժողովրդեան տեղի ունեցաւ բացումն Վարդա-
պետի Կիրակիէն, որ օր՝ յԱյգեհատան զըտ-
նուող Ս. Փրկիչ Եկեղեցին կը դիմէր խումբ,
խումբ, ժողովրդեան երկսեռ բաղմութիւնը
իրենց փոքրիկներով:

Առաւօտեան ժամը 10ին (Ը. Թ.) սկսաւ
ժամերգութիւնը, ժամը 12ին՝ վառն ժողո-
վրդեան Հայրապետական Ս. Պատարագ՝
ներդաշնակ երգեցողութեամբ Դպրաց դասուն:

Արհի. Վիճակաւորը յուզուած էր ջերմե-
ռանդ ժողովրդեան կրօնասէր զգացմունքէն:
Այն պահուն՝ մինչ պաշտօնապէս հրատա-
կեց Յոթեղեանի բացումը, սրտի բերկրու-
թեամբ, զնահատեց՝ զրուատեց անոնց յամե-
նայնի հպատակութիւնը սիրազեղ բերմամբ
առ Ս. Աթոռն՝ Կեղրոն ուղղափառ կրօնի,
և առ Սրբազան Բա հանպետն, որ է, Փո-
խանորդ Յիսուսի Բրիստոսի:

Սրբութիւն սրբոց կայր ի բազմոցի. և
յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ կո-
չումն Հոգւոյն Սրբոյ պարտ ու պատշաճ,
հոգեզմայլ շարականներով՝ գոհարանական
աղօթիւք ու մաղթանքներով, ի վերջոյ՝
օրհնութիւն Ս. Հաղորդութեամբ: Ժողո-
վրդեան մեծագոյն մասը մերձեցաւ գոհու-
թեան Սուրբ Խորհրդոյն:

Յուլիոս 7/20. — Այսօր ալ հաւատացելոց
բաղմութեամբ լեցուած է Եկեղեցին. առանց
բացառութեան ամէն սիրտ կրօնական սիրով
խանդավառ կը հետեւի Ս. Պատարագի հե-
ղիկ, անմուռնջ, պաշտօնաւոր ի հանդիստ
հոգւոյ իրենց փարելի նախահաւերու որոց
յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Ս. Պատարագէն անմիջապէս վերջ, Արհի.
Վիճակաւորը, Գեղ. Բաճանայք և համայն
ժողովուրդը թափօրիւ ուղղուեցան դէպի
նոր գերեզմանատուն ուր կոտորուեցաւ
պաշտօն հանգստեան ննջեցելոց:

Յուլիոս 13/26. — Ըստ օրակարգի Առաջնոր-
դարանի մատարան մէջ Արհի. Վիճակաւորը
զգեստաւորեցաւ՝ ուր կայր Սրբութիւն ի
բազմոցի և ժողովրդեան մէկ մասը ծնրադիր,
իսկ մեծագոյն մասը մատուռէն դուրս՝ կար-
գապահ խումբին հսկողութեամբ, ամէն ոք
իւր կարգին կազմ և պատրաստ:

Ամենէն առաջ բարձրացած էր ձողաբարձ
մեծ խաչը՝ որուն կը հետեւէր Ա. Յ. Բերց
վարժարանի աշակերտուհեաց խումբը համակ
սպիտակազգեստ չորս կարգի վրայ շարուած
դրօշակներով: Ասոնց կը հետեւէին Օրիորդք
և հարսուհիք, յետոյ կանայք. ասոնցմէ վերջ
երկրորդ ձողաբարձ խաչը բարձրացած էր ո-
րուն կը հետեւէր տղայոց և զպրաց դասը՝
ըստ եկեղեցական տարազու:

Արհի. Վիճակաւորը յետ օրհնութեան
հառաքայթ ի ձեռնին երեւցաւ, մեծ և փա-
ռաւոր ամպհովանոյ տակ մտաւ. թափօրը
շարժման մէջ էր. բուռնարակիւններ և երփն
երփն ծաղկօք լի, կողովաբարձ չորս փոք-
րիկներ գողտր կերպիւ ծաղիկներ սփռելու
հետ էին իրենց կարգէն. յոյժ կարգապահ և
պատկառազգու էր թափօրը: Երկու բացօղ-
եայ խորաններ պատրաստուած էին շքեղօ-
րէն, մին Թերճան փողոյ, իսկ միւսը մատ-
րան փողոցի մէջ, երբ առաջին խորանի
վրայ, ինկարկութիւն. օրհնութիւն, յար-
գանք և երկրպագութիւն կատարուեցան նոյն
կարգապահութեամբ դարձեալ յառաջացաւ
թափօրը դէպի երկրորդ խորան՝ դէպի եկե-
ղեցի որուն զմեծագույն և կոչնակը կը հնչէին
անդադար. թափօրի ատեն երգեցողութիւնք

հմայիչ էին։ Քափօրին երկրորդ մասը խիստ հաճելի բնոյթ մը առաւ, բնական դրից գեղեցկութեամբ կարծես նոր փայլ մ'աւելնալով ծառուղիէ մը ուր էր անցքը՝ անթափանցելի արեւուն ճառագայթներուն, ճիւղէ ճիւղ ոստոսաող երկնեանք թռչնիկներու ու սոխակաց դայլայիկներ կը խառնուէին երգիչ իռմարին գեղգեղանքին, մինչ օրհնութիւն կը արուէր երկրորդ առժամայ խորանի վրայ։ Ղիտելի էր փողոցի կրկին թեւերուն մէջ գտնուող հոծ բազմութիւնը և գեղեցկագոյն տեսարանը։ Յիշեալ թեւերէն մին, դէպ արեւելք իսկ միւսը դէպ հիւսիս, խորանը շինուած էր սոյն փողոցները միացնող անկեան վրայ, երկու կողմէն հաւաստարապէս տեսանելի դրից մէջ։

Շարժեցաւ թափօրը՝ եւ երբ հասաւ եկեղեցի, հանդիսաւոր պատարագը սկսաւ Արհի. Վիճակաւորը գոր մատոյց վասն ժողովրդեան, ժպտուկէս տեւեց թափօրը, թէ թափօրի և թէ Ս. Պատարագի պահուն մեր համայնքին սիրտն ու ակնարկը ուղղուած էր դէպի հրաշագործ վայրը, դէպի Լուրտ, միանալու համար զիտաւորութեամբ և ըղձիւ հոն գումարուած հաւատացելոց բազմութեան, ուր արժանապէս կը կատարուէր Ս. Հաղորդութեան Համաժողովի շնամեայ Յորելեանը։

Օգոստ. 2 (Ն. Տ.). Արհի. Վիճակաւորը պատարագեց՝ վասն ժողովրդեան. նոյն օրը՝ մինչեւ կէսօր ընդհատ ընդհատ երեք պատարագներ մատուցուեցան. ժողովրդեան ջերմեանդութիւնն աննկարագրելի էր. արեւածագէն սկսեալ Սրբութիւն Սրբոց ի բազմոցի դրուած էր. նոյն օրը ընդհ. Հաղորդութիւն կար, առ հասարակ մերձեցան Գոհութեան Ս. Սեղանոյն։

Ս. Հաղորդութենէն անմիջապէս առաջ «Գթամ ես ի վերայ ժողովրդեանդ... զուք տուք դոցա ուտել...» բնաբանը մերձեցնելով, Արհի. Վիճակաւորը ըսաւ, «Ահա Ձեզի պատրաստեցի երկնաւոր սեղան մը որուն կերակուրը ինքն Քրիստոս Աստուծոյ զառնուկն է, վայելեցէք զայն, ճաշակեցէք և տեսէք...» որը կէս ժամ տեւեց և խոր տպաւորութիւն թողուց բոլոր ունկնդիրներուն

վրայ։ Եկեղեցին մինչեւ երեկոյ լոյսերու մէջ կը շողշողար և հաւատացելոց բաղմութիւնը, ըստ կարգի, իրենց այցելութիւնը կու տային երկնաւոր Թագաւորին։ Երեկոյեան ժամերգութենէն վերջ՝ Սիրտ Յիսուսի Լիթանիայի երգեցողութեամբ Հայրապետական օրհնութիւն տրուելով հաւատացեալք շինիչ տպաւորութեամբ մեկնեցան եկեղեցիէն։

Առաջիկայ շաբթուան մէջ որոշուած էր՝ շքեղացնել գովելի ձեռնարկը, ներկայացումներով և ակադեմական հանդէսով. անակընկալօրէն սոյն օրերուն թմբուկով զօրակոչի հրատարակութիւն տեղի ունեցաւ, որով ստիպուեցանք առժամաբար թողուլ ամէն ինչ։

Մեր տխրութիւնը մեղմացաւ չափով մը, երբ Արհի. Վիճակաւորը Օգոստ. 9ը կիրակի օր՝ պատարագի աւետարանի ընթերցումէն վերջ ծանոյց Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ օրհնութիւնը Յորելեանի առթիւ. և կարգաւորով Սրբազան Քահանայապետէն հասած՝ լիակատար ներողութիւն շնորհուած ըլլալը ծանուցանող գրութեան պատճէնը։

Իցիւ թէ մօտ օրերս շնորհէ երկինք խաղաղութիւն և անդորրութիւն աշխարհի, որով, վերջ գտնէ յաջողութեամբ՝ մեր այնչափ եռանդով սկսած գործը։

Կը խնդրուի Գերապայծառ Տերութենէդ որ բարեհաճութիւնն ունենայ ներկայս հիւրնուկալել Արձագանգի սիւնակներուն մէջ անգամ մը ևս թողով զմեզ հրախտապարտ, որով եմ

Եւ մնամ հաւատեօք մեծաբանաց

Գեղյ. Գեղպ. Տեառնդ

Ծ. Խ.

ՕՆՆԻԿ ԿԵՐԿԵՐՆԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՀՐԵՏԱԶԻԳԻՆ ՈՍԿԻ ԳՆԴԱՍԵՂԸ. — Հետեւալ միջադէպը տեղի ունեցած է վերջին օրերս Փրանսայի մէկ հրետաձիգ զօրապունդին մէջ։

Ա... բանակին մէջ, ըստ սովորութեան, հրետաձիգներու վարժարանին հրահանգները

ժիտիվու Նամար ոչնչացուած թեան միջում մը
 Գառարուացաւ ։ Լսոր համար ընտրուեցան
 Եստկապէս աստեք որ իւրաքանչիւր հրեաա-
 խումբի մէջ արդէն նշանաւոր հանդիսացած
 էին ։ Սովորաբար առաջին միջանակը շահա-
 ղը կ'ըլլար հետեւակ թնդանօթածիկներէն
 մէկը , որովհետեւ աստեք շատ աւելի կը վար-
 ժուէին նշանառութեան մէջ քան ձիաւորնե-
 րը ։ Բայց այս անգամ այս վերջիններէն մին
 շահեցաւ մրցանակը որ է 50 ֆրանք և ոսկի
 գնդասեղ մը . ասկէ զատ մրցանակառուն կը
 հրաւիրուի գնդապետին աջ կողմը նստած
 ճաշելու ։ Նոյն սեղանին կը հրաւիրուին նաև
 զօրագունդին բարձրաստիճան պաշտօնեա-
 ները ։

Ճաշի ատենն գնդապետը խօսքը ուղղելով՝
յաղթականին որ քաջ գեղացի մըն էր և հա-
մեստօրէն լոկի միջիկ կը կենար նոյն պատ-
կառելի ընկերութեան մէջ՝ հարցուց .

—Ինչպէ՞ս կրցաք առաջին մրցանակը չա-
հիլ ղուք որ ձիաւոր թնդանօթածիդ մըն էք :

— Տէ՛ր Գնդապետ, վստահ էի որ պիտի չանիմ:

— Ի՞նչպէս, վատա՞ն էիք :

— Այո՛, Տէր Գնդապետ :

— Ահ, ի՞նչ կ'ըսեսք: Այն ասունն իմացու-
ցէ՛ք մեզի այն հնարքը որ կանխաւ կ'ապա-
հովէր ձեր յաջողութիւնն:

— Ահաւասիկ, Տէր Գրիգարպետ, ես Հուրս
գացի և Սուրբ Կոյսին խոստացայ որ եթէ
առաջին մրցանակը շահիմ, պիտի երթամ Ի-
րէն ընծայեմ ոսկի գնդասեղը :

Ամբողջ սպայակոյտը ուշի ուշով և յայտ-
նի հետաքրքրուեթեամբ միտ կը դնէր այս
խօսակցութեան :

— Բայց, ըսաւ գնդապետը, չեմ կրնար
ձեզի հրաման տալ. այդ գնդապետը պետու-
թեան է. ձեզի իբրեւ վարձ տրուեցաւ. պէտք
է որ քովերնիդ պահէք:

— Շատ լաւ ատոր հման ուրիշ հատ մը
չի հեղ կու տամ: Տէ՛ր Դնդապետ, կան մար-
դիկ որ կրօնքը չեն սիրեր և Լուստի չեն հա-
ւատար: Ես կը հաւատամ և Սուրբ Կոյսը կը
սիրեմ:

Գնդապետը յաղթուած էր. ամբողջ ուն.

կրեդիտորները հիացած էին, յուզուած էին այս
գլխոււորին խօսքերէն որ առանց ուսէ մարդ-
կային նկատման, անկեղծօրէն կը զաւանէր
իր կաթուղիէ հաւատաքը, Հրամանը շնորհ-
ուեցաւ առանց այլեայլի. կարելի՞ էր զլանալ,
(Semaine Religieuse de Rennes)

Ներկայիս ՊԱՏԵՐԱԶՄԻՆ առթիւ Յրահւ-
սայի մէջ կրօնական արտաքոյ կարգի խան-
դաւառ գործունէութիւն մը կը տեսնուի ա-
